«Հաստատում եմ»
«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ռեկտոր
Ե. Ս. Սերոբյան

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Լուսինե Աշոտի Ենգոյանի «Գոյականի ձևաբանական զուգաձևությունները հին հայերենում» թեմայով թեկնածուական ատենախոսության մասին՝ ներկայացված Ժ.02.01 «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Սույն ատենախոսության թեման ու խնդիրները արդիական են այն առումով, որ լեզվի զարգացման ընթացքում տարբեր պատճառներով ի հայտ են գալիս միևնույն (քերականական) իմաստի արտահայտման զուգահեռ, հոմանիշ ձևեր, որոնց քննությունը կարևոր է լեզվի կոնկրետ փուլի կամ լեզվական ամբողջ համակարգի շատ հարցերի պարզաբանման գործում:

Լեզվի կառուցվածքային բաղադրիչների համաժամանակյա քննության տեսակետից կարևոր է նրա տարբերակային ձևերի ուսումնասիրությունը, որոնք, արտահայտելով միևնույն քերականական իմաստը, դիտվում են զուգաձևություններ: Զուգաձևություններով հարուստ են գոյական և բայ խոսքի մասերը: Սրանց հարացուցային այս կամ այն ձևը կարող է ունենալ քերականական այլ ձևավորում (տարբերակ)՝ արտահայտելով քերականական տվյալ ձևի իմաստը: Այս առումով կարևոր նշանակություն ունի գոյականի զուգաձևությունների նկարագրությունը գրաբարում, որ կարող է համեմատության եզր դառնալ լեզվի հետագա փուլերի քննության համար տվյալ իրողության պատմական փոփոխությունների ընթացքը բացահայտելու նպատակով:

Գրաբարում գոյականի զուգաձևություններն ի հայտ են գալիս հոլովման և թվակազմության կարգերում, որոնց գիտական ուսումնասիրությունը հնարավորություն կտա ամբողջացնելու գոյական խոսքի մասի գիտական նկարագրությունը 5-րդ դարի մակարդակում: Այս հարցերի ուսումնասիրությանն է նվիրված Լուսինե Ենգոյանի «Գոյականի ձևաբանական զուգաձևությունները հին հայերենում» թեկնածուական ատենախոսությունը: Ակնհայտ է, որ ատենախոսը քաջածանոթ է թեմայի վերաբերյալ մասնագիտական գրականությանը և ուսումնասիրել է Դ. Թրակացու «Արուեստ քերականութեան» աշխատության մեկնիչների գործերը (*Դավիթ, Անանուն Մեկնիչ, Մովսես Քերդող, Ստ. Սյունեցի, Գր. Մագիստրոս*), Մխիթարյան միաբանության քերականների աշխատությունները (*Մ. Սեբաստացի, Ա. Բագրատունի, Մ. Չամչյան, Ա. Այտընյան*), անցյալ դարի և ժամանակակից լեզվաբանների ուսումնասիրությունները (*Մ. Աբեղյան, Ա. Աբրահամյան Հր. Պետրոսյան, Ս. Ղազարյան, Լ. Խաչատրյան, Գ. Թոսունյան, Է. Մկրտչյան, Գ. Խաչատրյան և ուրիշներ*): Լ. Ենգոյանը անդրադարձել է նաև այն հեղինակներին, որոնք ուսումնասիրել են ձևաբանական

նորմը, ձևաբանական զուգաձևություններն ու դրանց առաջացման հարցերը *(Վ. Առաքելյան, Ս. Ղազարյան, Զ. Աղաջանյան և ուրիշներ)*:

Ատենախոսը փորձել է լուծել հետևյալ խնդիրները.

1. Ներկայացնել գոյականի հոլովական զուգաձևությունների կառուցատիպերը 5-րդ դարում՝ ըստ պարզ և խառը հոլովումների, արտաքին և ներքին թեքման բնույթի.

ա) զուգաձևություններ գրաբարի հայցական հոլովում,

բ) զուգաձևություններ գրաբարի սեռական և տրական հոլովներում,

գ) զուգաձևություններ գրաբարի բացառական հոլովում,

դ) զուգաձևություններ գրաբարի գործիական հոլովում:

2. Բացահայտել գոյականի թվակազմական զուգաձևությունները և դրանք պայմանավորող գործոնները, այդ թվում՝

ա) իմաստային (գործառական) տարբերություններ,

բ) հիմքի տարբերակներ,

գ) տարբեր հոգնակերտ մասնիկների զուգորդումներ:

Այս խնդիրները լուծելու համար Լոսինե Ենգոյանն ուսումնասիրության հիմք է վերցրել 5-րդ դարի պատմիչների երկերը՝ աշխատանքում քննության ենթարկելով գոյականի հոլովական համակարգի և թվակազմության ոլորտի զուգաձևությունները 5-րդ դարի լեզվամակարդակում:

Ներածություն բաժնում ի մի են բերվել ձևաբանական զուգաձևությունների վերաբերյալ առկա դիտարկումները:

Առաջին գլխում քննության նյութ են դարձել գոյականի ձևաբանական զուգաձևությունները, մասնավորապես՝ վերջիններիս հիմքերը, աստիճաններն ու կառուցատիպերը 5-րդ դարում:

Հոլովական զուգաձևությունների համակարգային դրսևորումներն ու կառուցատիպերի օրինաչափությունները ներկայացվում են որոշակի դասակարգումով *(եզակի թվում, հոգնակի թվում, հասարակ և հատուկ անուններում)*, իսկ հոլովիչների գործածության հաճախականությունը՝ համապատասխան վիճակագրությամբ:

Երկրորդ գլխում կատարվել է հին հայերենում գոյականի հոլովակազմական զուգաձևությունների քննությունը (*պարզ, խառը և անկանոն հոլովումներ*):

Զուգաձևությունների հաճախադեպությամբ ուղղական-հայցական հոլովներում առանձնացվում են հատկապես *Ա արտաքին* և *Ա ներքին* հոլովումները, իսկ գործիականում ընդգծվում են *Ա* արտաքին հոլովման պատկանող բառերի ի հայտ բերած երկձևությունների սակավ դեպքերը:

Հեղինակը նկատում է, որ սեռական-տրական հոլովներում հանդիպող զուգաձևություններում պատահում են գրաբարի ինչպես դասական շրջանից, այնպես էլ հնագույն ժամանակներից մեզ հասած ձևեր՝ բերելով համապատասխան վկայություններ:

Երրորդ գլխում ուսումնասիրության առարկան գոյականի *թվակազմական զուգաձևություններն են՝* պայմանավորված հիմքի տարբերակներով, հոգնակերտ մասնիկների զուգորդմամբ, ինչպես նաև *իմաստային-գործառական, ոճական-գործառական* հիմունքներով:

Նշելով, որ գոյականի թվի կարգում զուգաձևությունները դրսևորվում են թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվում, հեղինակը թվականական զուգաձևությունները հիմնականում պայմա-

նավորում է բուն հոգնակերտ մասնիկների և հավաքական հոգնակերտների զուգահեռ գործածությամբ և առանձնացնում է երկձևույթ ու եռաձևույթ զուգաձևությունների տարբեր կաղապարներ:

Եզրակացություններ բաժնում ի մի են բերվել հետազոտության արդյունքները:

Աշխատանքն ունի ուշագրավ *հավելված՝* հին հայերենի գոյականի զուգաձևությունների բառացանկը:

Հեղինակին հաջողվել է գոյականի ձևաբանական զուգաձևություններին վերաբերող ամբողջ նյութը դասակարգել մեկ ատենախոսության սահմաններում, հնարավորինս համակարգել գոյականի զուգաձևությունները, ըստ անհրաժեշտության վերլուծել և մեկնաբանել զուգաձևության այս կամ այն տեսակը, վեր հանել զուգաձևություններ պայմանավորող գործոնները և բնագրային համապատասխան վկայություններով հաստատել կատարված վիճակագրությունը:

Հետաքրքրական է *իմաստային-գործառական* և *ոճական-գործառական* հիմունքներով պայմանավորված զուգաձևությունների քննությունը:

Անշուշտ, նման ուսումնասիրությունը, նկարագրական բաղադրիչից բացի, ենթադրում է վերլուծական մոտեցում, որը հաջողությամբ կատարել է հայցորդը: Գոյականի հոլովական զուգաձևությունները քննելիս նա առանձնացրել է հոլովիչների տասը տիպի զույգ ու քննությունը կատարել է ըստ կանոնավոր և անկանոն, պարզ և խառը, ներքին և արտաքին թեքման բնույթի:

Ատենախոսի բացահայտած հոլովական զուգաձևությունների տիպերն են՝

Ո//Ի. բեհեզոյ – բեհեզի; Ի//Ա. կանթեղիւ- կանթեղաւ; Ո//Ու. համարոյ-համարու; Ու//Ան. մահու – մահուան; Ա//Ու. Խոսրովայ- Խոսրովու; Ի//Ու. զարդի-զարդու; Ա // Ո. ամարանաց – ամարանոց; Եան//Ո. ծնունդեան – ծնունդոց; Եա//Ի. ժողովրդեան – ժողովրդի; Ø // Ա. հարց – հարանց; Ø //Ո. ջուրց - ջրոց:

Ուսումնասիրողը հոլովական հարացույցում զուգաձևությունները մեկնաբանում է՝ ելնելով հոլովների կառուցվածքային (ձևավորման) գործոններից. նա սեռական-տրականում հանդիպող զուգաձևությունները համարում է սկզբնաձևեր նրանցից համապատասխանաբար կազմվող գործիական ու բացառական հոլովների համար: Այս հոլովներում արձանագրված զուգաձևությունները Լ. Ենգոյանը համարում է ձևակազմական-քերականական, իսկ ուղղական-հայցական հոլովներում հանդիպող զուգաձևությունները՝ հնչյունական (*Հոմերոս-Հոմեր, Դոմեդիանոս-Դոմեդը* այլն):

Ատենախոսը չի բավարարվել սոսկ գոյականի հոլովական զուգաձևություններն արձանագրելով և դրանք մեկնաբանելով: Աշխատանքին առանձնակի գիտականություն են հաղորդում վիճակագրական տվյալները, որոնցից պարզ է դառնում, թե հոլովիչների տվյալ զույգը հեղինակներից յուրաքանչյուրի երկում ինչ հաճախականություն է ցուցաբերում, մյուս կողմից՝ հոլովիչների գործածվելու հաճախականությունը ատենախոսը ցույց է տվել համեմատական վիճակագրության համատեքստում՝ այդպիսով պարզ դարձնելով հոլովական զուգաձևությունների պատկերը 5-րդ դարում:

Լ. Ենգոյանը, գոյականի թվակազմական զուգաձևությունները քննելիս այն հիմնավորել է՝ ա) *իմաստային (ֆունկցիոնալ) տարբերություններով.* ինչպես՝ *գիր-գիրք //գրեան // գրեանք, բարի-բարիք // բարիոք // բարւոք // բարեւք,* բ) *թվակազմական հիմքերի տարբերակներով.* ինչպես՝ *արմատ-արմատիք //արմատք // արմտիք, կոդմն- կոդմանք //*

կողմունք, սերմն-սերմանք (սերմունք) գ) միևնույն հիմքին հոմանիշ մասնիկների զուգորդմամբ. ինչպես՝ *-ք//-եայք՝ համատոհմք// համատոհմեայք; եան //-եայք՝ որկորեան // որկորեայք, եար //- եանք՝ որեար //որեանք* և այլն:

Հայցորդը գոյականի թվակազմական զուգաձևությունների քննությունն ամբողջացնում է՝ եզրակացնելով, որ որոշ հոգնակիակերտներ (տարբերակային ձևույթներ) հանդիպում են դեռևս գրաբարի ոչ համակարգային կազմավորումներում, ինչպես՝
-ունք // -տիք // -տի՝ մանկունք // մանկտի// մանկտիք; -ք-տի //-տիք՝ ծակք // ծակտի // ծակտիք; - ք, -ունք՝ եպիսկոպոսք // եպիսկոպոսունք և այլն:

Այս ուսումնասիրությամբ հայցորդը գրաբարի մակարդակում բացահայտել է գոյականի հոլովական զուգաձևությունների տիպերը, առանձնացրել է զուգաձևությունների հոլովական հիմքերը, դրանք պայմանավորող լեզվական գործոնները, հիմնավորել այն տեսակետը, որ զուգաձևությունները պայմանավորված են լեզվի ձևաբանական նորմի փոփոխություններով, մյուս կողմից՝ գոյականի թվակազմական զուգաձևությունները պայմանավորել է առաջնային և երկրորդային թեքույթների գործառական արժեքներով:

Ատենախոսությունն ունի *տեսական ու գործնական* նշանակություն. տեսականորեն բացահայտվում են դասական հայերենի ձևաբանական նորմի և ձևաբանական զուգաձևությունների հարաբերակցված փոփոխությունները, վեր են հանվում զուգաձևությունների կառուցատիպերը, որոնք կարող են օգտագործվել լեզվի պատմության տեսական դասընթացներ կազմելիս, գործնական հետազոտության փաստական նյութը կարող է լեզվի տարբեր շրջանների տարժամանակյա ուսումնասիրությունների համեմատության եզր դառնալ:

Գնահատելով Լուսինե Ենգոյանի իրականացրած ուսումնասիրությունն ու դրա արդյունքը՝ այնուամենայնիվ, հարկ ենք համարում անդրադառնալ աշխատանքում տեղ գտած *որոշ անճշտությունների, ոճական անհարթությունների, կետադրական սխալների ու վրիպակների*: Այսպես՝

1. Նկատվել են վիճակագրական տվյալների անճշտություններ, որոնք կարող են պայմանավորված լինել նաև անուշադրությամբ, օրինակ՝ ճիշտ չեն նշվել Եզնիկի երկում *ջուրց* տարբերակի (էջ 47), Ագաթանգեղոսի երկում *հանգստի* ձևի (էջ 46) թվերը:
2. Աշխատանքում նկատվել են *որոշ վրիպակներ* (էջ 1՝ *միևնույն է* (փոխ.՝ միևնույնն է), էջ 18՝ *եզակի* թե հոգնակիի (փոխ.՝ *եզակիի*), էջ 20՝ *նեկայացնում*, էջ 23՝ *ոչ-համակարգային*, էջ 27՝ *պայմանանվորված*, էջ 54՝ *պատաւնող, էջ 113* և այլն), *ոճական անհարթություններ* (էջ 65՝ *քննարկելով ... տարբերակները՝ նկատելի են* (փոխ.՝ *նկատել ենք*) և այլն), *կետադրական սխալներ* (էջ 14; էջ 52; էջ 53):

Ցանկալի կլինի, որ հետագայում աշխատանքը վերանայելիս կամ տպագրության նախապատրաստելիս ատենախոսն ուշադրություն դարձնի ինչպես վերոհիշյալին, այնպես էլ ատենախոսության վերաբերյալ մեր հետևյալ *առաջարկություններին*, որոնք կարող են օգնել նրան աշխատանքը ներկայացնել առանց սխալների և թյուրըմբռնումների: Այսպես՝

- Ատենախոսի բացահայտած հոլովական զուգաձևությունների տիպերը տրված են եզակի թվի հոլովների հարացույցային ձևերում: Հետաքրքիր է՝ դրանք այդ տիպերով գործում են, արդյոք, հոգնակի թվի հարացույցներում:
- Աշխատանքում երբեմն նույն երևույթը երկակի մեկնաբանություն է ստանում. մեկ՝ իբրև հոլովական, մեկ՝ իբրև թվակազմական զուգաձևություն: Այսպես, ատենախոսն ուղղական

հոլովում Ա ներքին թեքման բառերի զուգաձևությունների օրինակներ է վկայում հոգնակի թվով՝ *սերմունք //սերմանք; կողմունք //կողմանք; մահունք //մահուանք; արմատ-արմատիք //արմատք //արմտիք* և այլն, որոնց հանդիպում ենք նաև թվակազմական զուգաձևությունների բաժնում:

Կարծում ենք՝ այդ հարցերին կարելի է անդրադառնալ կա՛մ հոլովական, կա՛մ թվակազմական զուգաձևությունների բաժնում, իսկ *հոլովական որոշ զուգաձևությունների վերաբերյալ* պետք է վերապահում ցուցաբերել ու լրացուցիչ մեկնաբանություն տալ: Այսպես, որոշ զուգաձևություններ դուրս են գրական նորմայից և, հավանաբար, բարբառային կիրառություն ունեն, օրինակ՝ *ի քուրոջէ //ի քրոջէ; բլուրք//բլերք; որձակաւ //որձակիւ* և այլն:

Այնուամենայնիվ, ամբիոնն այն կարծիքին է, որ կատարված գիտական ուսումնասիրությունը հաջողված է, ատենախոսության բովանդակությունը համապատասխանում է թեմայի հետազոտական նպատակներին ու առաջադիր խնդիրներին, ասելիքը ներկայացված է գիտական շարադրանքով, տրված են հստակ ձևակերպումներ, եզրակացությունները բխում են կատարված հետազոտությունից, այն ունի գիտատեսական կարևոր նշանակություն, իսկ նկատված թերությունները մասնակի են և չեն ստվերում աշխատանքը: Ատենախոսության թեմայով հրապարակումներն արտացոլում են հետազոտության հիմնական բովանդակությունը, սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը, ուստի կարելի է **երաշխավորել հրապարակային պաշտպանության:**

Լուսինե Աշոտի Ենգոյանի «Գոյականի ձևաբանական զուգաձևությունները հին հայերենում» **թեմայով** թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի՝ թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները և համապատասխանում է Ժ.02.01 դասիչին («Հայոց լեզու» մասնագիտությամբ), ուստի ատենախոսն արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ՝

Ա. Ա. Ավագյան (բ.գ.թ., դոցենտ)

17. 05. 2022թ.

Ամբիոնի վարիչ Ա. Ավագյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար՝ Կ. Ռ. Պետրոսյան (կ. գ. թ., դոցենտ)